

էզա պառաւան էլ չէ՛ վուր կուրկու խամար ի Դաւթը լաիւ կան կգեայ. էզ պառաւ Դաւթը խօր սերուզն էր, վուր Դաւիթ յեթիմ է, սըբաը վերայ կը ցաւ ի, կուղի Դաւթըն ըսն սովրցըցի, Դաւիթ մարդ գառնայ, մարդ ընը:

159. Պառաւան ի, կը խարցըցի Դաւթըն, կեան կգեայ. կգեայ, կը տանայ Դաւիթ էլ ի յիւր կուրկու արաը մէջն ի.— Դաւիթ, կըսի յեղի՛, գնա՛, ա՛խ Դաւիթ, ա՛խ Դաւիթ, կրեօզ քի տանը՛ Դաւիթ, կրեօզ քի տանը Դաւիթ, էլ ի գիւ լիկը իս իմ կուրկու մէջ, ճնճի՛ւզ կոպանիս: Մտըրայ Մէլըք ինչքան էր— կինը ասող կայ, էնու կեօրա՛ չատը ի զարկըր գաշաը մէջ, թիւղթ ճամբիս ի Յեօվանին. «Եկէք, կուիւ էնինք, չըք իրեայ, իս կամա՛ քեաղքը վերայ, ինքան մարդ կայ, նանց սըձը կըսպանիմ, էգը կասնիմ, կրակ կը թեօղնիմ, քեաղաքն էլ կը վառիմ»:

160. Պառաւան որ սիւսն կըսի, Դաւիթ կը հռոտուի, բիբի կերթայ, մէկ ծառ քեօքախան կէնի, կը գնի վուր թիւին վուր էրթայ կուի:

Քեաղաքն էլ ինչը կը գեօղան, ինչը կը վախենան:

Պառաւ կը բեօռա Դաւթըն, իսկէն կը վազնի.

— Կանգնը, Դաւիթ, մ՛երթայ, կանգնը Դաւիթ, կրեօզ քի տանը, Դաւիթ, կրեօզ քի տանի, Դաւիթ. էզով տէրթաս Մըսըրայ Մէլըքի կուի:

Էսոց.— Պառաւ. ասպա ինչով տէրթամ:

161. Էսոց.— Դաւիթ, մահեար չկայ քիւ խօր Քիւրիկի Ջալալին՝<sup>2</sup>

**1 Թրք.— Չափ. հաւասար:**

2 Քիւրիկի Ջալալին խրեղէն ձի էր. Դաւթը խէր զինաց ծով յափ. կը ֆրար (մանգալ). տըսաւ մէկ ձի ծովուց ըլաւ զիւս. զինաց նախըր մէջ զսրախի (մատակ ձի) վերայ. խէր էն գիսէն վազից ձին տը բըռնէր. չկերաց զաւթէր (զսպել). ձին ի զինը չէտուր ձեռ:

Դառցաւ զէն զսրախն էտուր յիռչել, տարաւ տուն. որ կը տանի տուն զսրքիսի տիրուջ կը կանչի կըսի.— Քիւ զսրքիսի զին ինչ իւ Կըսի.— Դաւիթ (մեծ Դաւիթ). զսրքիսի զին յիռուն ուսի ի. կտաս, տուր. չըս խոյ, իմ զսրախ կը տանիմ:

Դաւիթ կը խանի, խարիր ուսըր կտայ, կըսի.— Ձիու տէր, զինաըձը չանըձիս, էն ձիուց իս խէր տիանամ:

Կըսի.— Դաւիթ, խազար խէր տըսնաս քեօ ձիուց, իս կը վախենէր, զիւ ըձը փարայ չտէր, որ էսքան փարայ տուրր. քի կօխնիմ, իմ ճիսին էլ քի կօխնին: Կառնը փարէն կերթայ: